

Այդ տեղի բնակիչները յետին ծայր դժբախտութեան մէջ ինկած՝ գաղթելու կը պատրաստուին:

Հրաշք չէ՞ք համարիր, եթէ իմացունեմ ձեզ, թէ այդ կողմի հայերէն այս մասին հանրագրութիւն մը եկած չէ պատրիարքարան հետեւեալ իմաստով.

«Մարախները մեր գիւղերուն վրայ յարձակեցան եւ մեծ վնաս տուին հունձերուն. ստացուածքի ապահովութիւն չկայ... հակառակ Բերլինի դաշնագրոյն 61 - րդ յօդուածին: Կ'աղաչենք, բարեխնամ կառավարութեան ուշադրութիւնն հրաւիրեցէ՛ք այս գազանաբարոյ եւ կրօնամոլ մարախներուն վրայ եւ անոնց պատժուիլը խնդրեցէ՛ք: Զարմանալին այն է թէ այս բարբարոս մարախներն կ'համարձակին տեղույս վսեմ. կուսակալին առջեւ հասցունել մեզ այս չարիքներն. եւ վսեմ. կուսակալն բոլորովին անտարբեր՝ ոստիկան մ'անգամ չորկեց զանոնք ձերբակալելու համար: Զրոյց կայ թէ կուսակալին թելադրութեամբն է որ մարախներն այսպէս կ'հարստահարեն զմեզ: Անյապաղ օգնութիւն դրկեցէ՛ք մեզ, ապա թէ ոչ պիտի փոխենք մեր կրօնը»:

Անշուշտ իբրեւ հրաշք, այսինքն իբրեւ բնականէն դուրս իրողութիւն մը նկատելու է այս լռութիւնն, զոր կը պահեն Պիլէճիկի հայերը մարախներու նկատմամբ, երբ խորհինք մի անգամ, որ գաւառացի հայն ամեն օգնութիւն պատրիարքարանէն կսպասէ: Եթէ քիւրդէ մը կամ չէրքեզէ մը յափշտակուի անոր շորը՝ անմիջապէս կ'հեռագրէ պատրիարքարան, որ շոր դրկուի իրեն, սպառնալով միանգամայն, որ կրօնքը պիտի փոխէ՝ եթէ իւր խնդիր մերժուի պատրիարքարանէն:

Վա՛յ այն մարդուն կրօնքին, որ շորէն կախում ունի...

Մենք ալ կը հաւանինք ընդունելու, թէ գաւառացի հայն ունի բազում պատճառներ, որովք անհնար կը լինի իրեն ինքզինքը պաշտպանել քիւրդի կամ չէրքեզի դէմ, եւ այս պատճառներն ալ այնքան ծանօթ են, որ զանոնք մի առ մի հոս նշանակելն անօգուտ աշխատութիւն մը յանձն առնել է. սակայն ժա՛մ է, որ գաւառացի հայն այդ պատճառներուն բարձմանը աշխատի՝ որչափ որ կարող է ինքն, եւ այն ատեն միայն դիմէ պատրիարքարան՝ երբ իւր ոյժն անբաւական է դիմադրել վտանգին:

Ա՛րդ շնորհաւորելով Պիլէճիկի հայերուն պահած լռութիւնն՝ կ'խնդրեմ որ ընդունին խորին յարգանքներուս հաւաստիքն, որով մնամ եւ այլն: